տեղից պէտք է վերադառնայ։ Մենք ուրախանում էինք որ ինչ և իցէ, գոնէ մի պատոտր կունենանք. իսկ այժմ մի կողմից դրա ուշանալը, և միւս կողմից «Մշակի Ս. Պետերբուրգի թղթակցից տուած լուրը մեր բոլոր յոյսերը կարեց։

Մեր Պետերբուրգի բարեկամը մեզ խորհուրդ է տալիս, որ մենք հայ-աւետարանականներս աշխատենք ինդիրք տալու, որպէս զի անկախ դառնանք Ս. Պետերբուրգի կամ Մոսկվայի գերմանական, լուտերական կօնսիստորիայից, մեզ համար իրաւունք ինդրենք մեր հայ-աւետարանական կօնսիստորիան ունենալ Անդրկովկասում, ինչպէս որ հայ-կաթոլիկները իրանց համար իրաւունք են խնդրում այժմ անկախ դառնալ Սարատովի եպիսկոպոսից և իրանց սեփական հայ-կաթոլիկ եպիսկոպոսութիւն ունենալ Անդրկովկասում։

Մեր բարեկամի մեզ տուած խորհուրդը որքան հանգիստի է, այնքան էլ, եթէ չասեմ անիրագործելի, գոնէ դժուար իրագործելի է։ Բայց գոնէ մեզ համար իրաւունք ինդրենք, ազգով հայ լինելով, հայ-աւետարանական քարոզիչ և հայ ուսուցիչ ունենալու։ Եւ այդ իրաւունքը, որքան ինձ յայտնի է, ոչ ոք էլ չէ խլել մեզանից երբէք։

Իմ կարծիքս այն է որ մենք դարձեալ և դարձեալ այդ մասին խնդիրքներ, աղաչանքներ պէտք է ներկայացնենք մեր թէ կովկասեան և թէ կենտրոնական բարձրագոյն իշխանութիւններին, հետևելով այդ կողմից մեր հայ-կաթոլիկ եղբայրների գովելի օրինակին։

Հայ-Աւետարանական

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԹԻՑ

—

17 Մայիսի

«Մշակի 19-րդ համարի ներգործութեան ներքոյ, Նոր-Բայազէտում պ. Ղազար Ղազարեանցը, զըրգռված մարդասիրական զգացմունքից, բաց արաւ ստորագրութիւն, վանի մեր սովատանջ եղբայրներին օգնելու մտքով, որից գոյացած 137 ր. 7 կ. ուղարկեց «Մշակի» խմբագրութիւնը։ Դրանով պ. Ղազարեանցը չը վերջացրեց իր հանգանակութիւնը, այլ սկսեց չարունակել Նորան, բայց մի ուրիշ Նպատակաւ, այն է Խրիմեան սրբազան Հայրիկի ձեռնարկած հիւանդանոցին օգնելու։ Ստորագրութիւնը յաջող է գնում, դէպի որը մեր ժողովրդի անտարբեր դասին հրաւիրում ենք չը նայել սառն աչքերով, այլ օգնել որՓափ կը ներէ իր ուժը, կամ, աւելի լաւ ասած, կամքը։ Փող հաւաքելը, պէտք է ասած, ունի և իր դժուարութիւնները. իւրաքանչիւրի մէջ, առաջարկութիւնը անելիս, չէք զրաՆում պատրաստականութիւն, այլ պատահում էք մերժումների և դժգոհութիւնների իբրև թէ իրան ուզում են թաղանել. այսպիսի անհատների հետ գործ ունենալ հարուածում է մարդասիրութեանը։ Ի նկատի առնելով հանգանակութեան այդ հանգամանքները, պ. Ղազարեանցի ձեռնարկութիւնները արդարև պատիւ են բերում նրան, որը բացի դրանից, ինչպէս քաղաքական պրիտաւ, գովելի է և իր պատտնական գործունէութեան մէջ.—քաղաքը նրա հոկտոմբեան ներքոյ գտնվում է կատարեալ ապահովութեան մէջ, չարագործութիւնները՝ այն ևս մանր, չատ քիչ, կամ հազիւ են պատահում, այն էլ նրա հետաքրքրութեամբ բացվում են և ենթարկվում են դատաստանական պատժի։ Այդպիսով պ. Ղազարեանցը վայելում է բոլորի յարգանքն և ՆորՆախագահութիւնը, որն յայտնում ենք հրապարակաւ։ Զմեռն այս տարի միւնոյ և երկարատև լինելով, սպառեց անասունների պաչարը և մեծ հոգս պատճառեց ժողովրդին. սաստիկ ցրտից Սնանայ լիճը, Ձմեռվայ սկզբից իր բոլոր տարածութեամբ սառել էր և բաց էր արել սահնակների հաղորդակցութիւնը մի կողմից միւս կողմը. սառուցի կոտրվելը տեսեց մինչեի ապրիլի վերջերը։ Սառեցվելնայ լճի հետ ամեն տարի չէ պատահում, այլ երբեմնապէս հինգ-վեց տարին մի անգամ,—սառում է փետրվարին, իսկ կոտրվում է մարտին։

Նայելով բուսաբերութեանը՝ յուսալի է որ հունձը լաւ լինի և վերջ դնէ թանգութեանը, եթէ անձրևներն էլ իրանց կողմից Նպաստեն մեր լեռնավայր հանդերին, որոնք ջրարբի չեն։

Այս օրս եկան Նոր-Բայազէտ Ցանկաստանի Բայազէտից երեք տուն Նոր գաղթականներ. նրանք պատմում են թէ հայ ազգաբնակութիւնը սովի պատճառաւ տեղից խախտվելու է և արդէն գործն սկսվել է իրանցով, որոնք թւով տասն տուն եղել են առաջին օրինակը։ Գաղթելու համար որոշված են Երևանի նահանգը և Նոր Նուանված երկիրները։ Գաղթականների պատմածին նայելով, սովը նրանցում ամենասաստակ դեր է խաղում, և վանից ստացած դրամական օգնութիւնը աննշան ծառայութիւն է արել նրանց։ Այս մի կողմից, հարստահարութիւնները միւս կողմից հարկադրեցին թողնել հայրենիքը՝ չը նայելով Կ. Պոլսոյ և Կարնոյ ազգայիններին թախանձագին համոզմանցն, որոնց հետ գրաւոր յարաբերութիւններ են ունեցել։ Գաղթականների դժգոհութիւնը դէպի իրանց ազգները—այդ անձնական չահախնդիր առաջնորդները, հասնում է վերջին ծայրահեղութեան. խօսում են մի առանձին պարտաւանքով նրանց անտարբերութեան և թուրքահաճոյ լինելու վրա,—խօսքը՝ սարգիսների և նրա նման աղաների վրա է. խօսում են նաև վանից ստացած դրամական օգնութեան մէջ պատահած անկանոն բաժանման վրա առանց մերձաւորապէս իմանալու իւրաքանչիւրի կարօտութիւնը, և թէ գաղթականութիւնը՝ որ առանց ազդելու չի մնայ Աւչիրեցոցց վրա, տեղի չէր ունենայ, եթէ նրանք դրամի փոխարէն հաց ստանային, որովհետև չունենալով բեռնակրական ուժ, ուրիշ տեղերից հայթայթել անհամար չեն կարողացել։ Ահա թիւրքիայի Հայաստանում արհեստական ձեով մտցրած սովի արդիւնքը, թիւրքիայի այդ քաղաքականութեան վրա մի որոշ զաղափար ևս կազմելու համար, լրագրներում թւած գաղթականութիւններից ի բաց, դէպքը ստիպել է տալի գրել մի ուրիշ նոյնանման վրա, որի մասին դեռ լրագրներում ոչինչ չէ երևացել։ 1863 թւականում Ցանկաստանի Հայաստանից, խարբերդու նահանգից մօտաւորապէս 800 գերդաստան չարժվեցին իրանց տեղերից Ռուսաստան գաղթելու համար. նրանք եկան մինչև Կարս, որտեղից կրկին յետ վերադարձան իրանց ընակութեան տեղերը համոզմամբ հանգուցեալ Մատթէոս կաթուղիկոսի և Կարսի առաջնորդարանի։ Այդ ժամանակը թիւրքիայի կառավարութիւնը նայում էր այդ գաղթականութեան վրա, այնպէս՝ որպէս թէ չէ տեսնում և նրա պաշտօնեաներից ոչ մէկը, խարբերդից սկսած մինչև ի Կարս փորձ անգամ չը փորձեց իրանց աչխատասէր և հոլ Նպատակների գաղթականութիւնը արգելելու, այլ ծածուկ աչխատում էին որ մի օրով առաջ անցնեն սահմանգլուխը։ Մեծ եղաւ կառավարութեան զայրոյթը, երբ գաղթականները վերադարձան իրանց տեղերը,—տիրելու իրանց հայրենի ժառանգութիւնը։ Դա հէնց էն ժամանակներն էր, երբ նա՝ «այսինքն Ցանկաստանի կառավարութիւնը» ուզում էր Հայաստանը բնակեցնել Ռուսաստանից արտաքսված վայրենի չերքեզներով։ Գաղթականներից միայն մի տուն յետ չը դնաց և մինչև հիմայ էլ բնակվում է Ռուսաստանում նրան հպատակ դառած։

Եղիկ Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Վանայ, Բայազէդի և Աւչիերտի սովատանջների համար հաւաքած պ. Վարդան Ստեփանեանի և պ. Պողոս Վանեցեանի ձեռքով։

Սարգիս Բէշկեան 1 ր., Պողոս Վանեցեան 5 ր., Մատեոսի Մկրտիչ Զալալեան 2 ր., Սիմէօն Զալալեան 1 ր., Հայ ոմն 1 ր., Արամ Մատաթեան 3 ր., Հայ ոմն 1 ր., Գէորգ Սանոյեանց 2 ր., Մնացական Ղլըմիրեան 1 ր., Սարգիս Շաքիրեան 5 ր., կարապետ Տիգրանեան 10 ր., Ս. մատեոսի Մարիամ Զալալեան 3 ր., Ս. Մարիամ Վանեցեան 3 ր., Ս. Վարդապարիկեան 3 ր., Մի քանի բարեսէր տիկնայք 23 ր., Խաչիրեան եղբայրք 5 ր., Յովհաննէս Բաբաջանեան 1 ր., Գրիգոր Սիմէոնեան 2 ր., Աղաբէկ մատեոսի Յովհաննէսեան 3 ր., Յարութիւն Նալեան 3 ր., Սարգիս Յարախանեան 1 ր., Աբրահամ Աւետիսեան 1 ր. Նազարէթ Փէշտիմալճեան 1 ր. 50 կ., Երզիկ Զիւանի 1 ր. 50 կ., Յակոբ Թուխոյեան 1 ր., Աւետիք Ղազարեան 1 ր., Մկրտիչ Գործակալեան 1 ր., Խաչատուր Կնտեղեան 1 ր., Գալուստ Վարսավիրեան 1 ր., կարապետ Թուխչան 1 ր., Ոմն 1 ր., Յովհաննէս Կոստանեան 5 ր., Յակոբ Զիլինկիրեան 3 ր., Գրիգոր Վէքիչեան իւր դերասանների կողմից 50 ր., Գալուստ Ադամեան 2 ր., Մեկլքոն Զիհանեան 50 կ., Աէէքսանդր Տէր-Սարգսեան 2 ր., կարապետ Սնոյեան 1 ր., Աւետիս Վանեցեան 3 ր., Գալուստ Մանուկեան 1 ր., Խաչատուր Կրանեսեան 3 ր., Ս. Մարիամ Զալալեան 60 կ., Ս. մատեոսի Նողեր կօլոյեան 1 ր. 70 կ., Յակոբ Պետրոսեան 3 ր., Անտոն Ստեփանեան 1 ր., Աւաքել Փէչվիլանեան 1 ր., Օհան Գուրթեան 1 ր., Մկրտիչ Սարաֆեան 1 ր., կարապետ Սարաֆեան 2 ր., Գրիգոր Ստեփանեան 1 ր., Մատեոսի Մկրտիչ Նալպանտեան 1 ր., կարապետ Սանոյեան 3 ր., Գրիգոր Լազրով 1 ր., Հաճիպապ Մինասեան 2 ր., Աղան Խաչատուրեան 1 ր., Խաչատուր Յակոբեան 1 ր., Յարութիւն Գէնջեան 1 ր., կարապետ Վանեցեան 1 ր., Մատեոսի Մկրտիչ մատեոսի Պողոսեան 1 ր., Գասպար Կիրակոսեան 1 ր., Յովհաննէս Հէքիմեան 1 ր., Ազապպ մատեոսի Կարապետեան 5 ր., Գէորգ Սոզոյեանց 1 ր., Եգոր Քալանթարեանց 2 ր., Պողոս Այվազեանց 3 ր., Պետրոս Գեանտարեան 2 ր., Յարութիւն Ստամբոլցեանց 1 ր., Աբիսողոմ Յովհաննէսեանց 10 ր., Վարդան Ստեփանեանց 3 ր. 20 կ.։ Ընդամենը 214 ռուբլի։

Աբ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Գօրի, 12 յունիսի

Հրատարակելով «Մորեխ և Նորա ոչնչացնելու միջոցներ» բրոշիւրայի վրացերէն թարգմանութիւնը յօգուտ Վանայ սովելոց, յանձնաժողովս մտադիր է այս օրերս վրաց լեզուով տպագրած առանձին նամակների հետ ուղարկել իրան ծանօթ ազգայնոց նոյն բրոշիւրների քանի մի օրինակներ այն մտքով, որ փողերը, առ իւրաքանչիւրն քսան կոպէկ հաշուելով, հասուցանեն յանձնաժողովի կողմից Թիֆլիսում ընտրված մարդուն, որի անունը կը լինի յիշված նոյն իսկ նամակում,—իսկ գրքերը ձրիապէս բաժանեն աղքատ դասակարգին, մանաւանդ գիւղացոց։—Բայց որպէս զի նոյն վրացերէն նամակի բովանդակութիւնը ամենքին հասկանալի լինի, խնդրում ենք խմբագրութիւնից Նրա հայերէն թարգմանութիւնն ևս, որ սորա հետ ուղարկում է, տպագրէք ձեր լրագրի առաջիկայ համարում։ Անդամ յանձնաժողովի Ստեփանոս ուտաղ քահանայ Տէր-Ստեփանեանց։

Երբ այս տարի Հայաստանից ստացվեցաւ ռուսաց կօնսուլ պ. Կամսարականի հեռագիրը առ այն, թէ՝—«Վանի մէջ և Նորա չրջակայ գիւղերում սովը օրէցօր սաստկանում է, հարիւրաւոր անմեղ մանուկներ փողոցների վրա ընկած են մերկ և քաղցած. Աղբակում 150-ի չափ սովին զոհ եղածների դիակները տակաւին չեն թաղված. եթէ չուտափոյթ օգնութիւն չը հասցնէք—Հայաստանը կորած է,» ամբողջ աչխարհը յայտնեց իր մարդասիրական զգացմունքը։ Ի միջի այլոց և Գօրու հասարակութիւնը, առանց խտրութեան ազգութեան և դաւանութեան, մի այնպիսի քրիստոնէական կարեկցութիւն արծարծեց, որ քանի մի օրվայ միջոցում յաչողվեցաւ մեզ հաւաքել 1200 ռուբլի նուիրատուութիւն։

Իսկ այսօր Հայաստանից ստացած, թէ մասնաւոր և թէ պաշտօնական տեղեկութիւնքը աւելի սարսափելի են՝ — սովին հետևացել է տարափոխիկ հիւանդութիւն և տաՓիների անասնելի հոլածանքը։ Ահա թէ ինչ է գրում սորա մասին ռուսաց «Петербургскія Вѣдомости» նշանաւոր լրագիրը՝—«Վանից Նոր ստացված հեռագիրը թէև կարճ, բայց ազդու կերպով հաղորդում է.—«Փուրքերը կողոպտում և սպանում են հայերին։ Սարսափը պատել է ամենքին։ Մինթէ հայ լինելը յանցանք է։ Օգնեցէք մեզ»։

Այս ամենը աչքի առաջ ունենալով, Գօրու յանձնաժողովը հարկաւոր է համարում իր գործունէութիւնը տակաւին ևս չարունակելու. և այսօր, ի միջի այլոց միջոցաց օժանդակութեան, աչխատանքը իր անդամ Տէր-Ստեփանեանց Ստեփանոս ուտաղ քահանայի, հրատարակեց «Մորեխ և Նորա ոչնչացնելու միջոցներ» կոչված բրոշիւրայի վրացերէն թարգմանութիւնը, որից ուղարկելով մեզ այսչափ օրինակ այսչափ բուլալ արժողութեամբ, յարգանքով խնդրում ենք՝—փողերը հասուցանել յանձնաժողովս, իսկ գրքերը ձրիապէս բաժանել աղքատ դասակարգին, մանաւանդ գիւղացոց, որով և կը տաք նոցա միջոց—հաստատ և արդիւնաւոր կերպով մաքառելու իրանց ահաւելի թշնամու դէմ։—Սորա հետ ի միասին—Հայաստանի հարիւր հազարաւոր բնակիչներն ևս ազատած կը լինէք սովից և կանխաժամանակեայ մահուանից։

Յանձնաժողովի անդամներ—Ստեփանոս ուտաղ քահանայ Տէր-Ստեփանեանց, Գրիգոր Ամիրեանց, Զաքարիա Տէր-Մինասեանց, Կինոյ Նիկոլ Դիւսամիէ, Գալուստ Ստեփանեանց, Գրիգոր Թուխունեանց, Աղայոյ Թուխայեանց, Դէորգ Թոմանեանց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նորերումս վախճանվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ տոհմական պատուաւոր քաղաքացի Եռգոր Մոփէսեան Տէր-Արտաչանանց։ Հանգուցեալը կատկեց յօգուտ Թիֆլիսի ազգային հայոց ծխական դպրոցների 1000 ռուբլ, յանձնելով այդ գումարի կարգադրելը Գարբրիէլ Սուլթանովեանցին։ Նոյնպէս հանգուցեալը կատկել է մի գեղին, որ գտնվում է Շամբուռեանցց ս. Աստուածածնի եկեղեցուն կից յօգուտ նոյն եկեղեցու։ Թէև գումարը մեծ չէ, բայց չատ ուրախալի է որ Սուլթանովեանցի պէս մարդուն է յանձնված կատկի կատարելը։ Ցանկալի կը լինէր որ և աւելի խոշոր գումարների կատկատարներ Նշանակէին Սուլթանովեանցի պէս անձինք. այն ժամանակ հաստատ կարելի էր ասել որ կատկողների գումարները չէին կորչի, ինչպէս գումարներից չատերը կորան, յանձնված լինելով կատկածաւոր ազնուվեան տէր մարդիկներին։

—

Ինչպէս յայտնի է Նորերումս ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ռուս երևելի բանաստեղծ Պուշկինին արձան կանգնեցրին։ Մայրաքաղաքների բոլոր լրագիրները լի են արձանի բացման հանդիսի նկարագրութեամբ և նոյնպէս յօգուտ Պուշկինի նշանաւորութեան մասին ռուս գրականութեան համար։

—

Ստացանք յօգուտ Վանի սովատանջների մի թիֆլիսեցի անյայտ պարոնից 3 ռուբլ։

—

Յունիսի 11-ին Արծրունու թատրոնում վրաց թատրոնական խումբը ներկայացրեց պ. Ա. Գերեսելիի «Վիմաս» պիէսան։ Հաստակութիւնը մեծ համակրութեամբ ընդունեց երիտասարդ հեղինակի պիէսան։

—

Անձրևային եղանակը չարունակվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ և Նրա չրջակայքում։ Մեզ գրում են Կովկասի չատ տեղերից, որ այս տարի անձրևները ամեն տեղ առատ են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ

—

Մայիսի 30-ին անգլիական լորդերի ժողովի նիստում, լորդ Կարնարվոն հարց առաջարկեց թէ ինչ միջոցներն գործ դրվել թիւրք կառավարութեան կողմից՝ Հայաստանում տիրող թշուառութիւնը թեթևացնելու համար։ Այժմեան դրութեան վատնը գրա մէջն է կայանում, ասաց լորդ Կարնարվոն, որ սովը և չքաւորութիւնը սպառնում են մի ամբողջ ցեղ ոչնչացնելու։ Լորդի կարծիքով անհրաժեշտ է մի քրիստոնեայ նահանգապետ նշանակել Հայաստանում, լիազօր իրաւունք տալով նրան կամ ամբողջապէս, կամ մասամբ գործ դնելու տեղական պէտքերի վրա երկրի արդիւնքները։ Լորդ Գրենվիլ պատասխանեց, որ անհարիր է որոշել թիւրքաց կառավարութեան ձեռքով գործադրվող միջոցները թշուառութեան տարածման և առաջն առնելու դիտաւորութեամբ, մի երկրի մէջ, որի ոյժերը սպառվեցան պատերազմի, երաշտութեան, վատ կառավարութեան շնորհով և ուրիշ պատճառներով։ Մի հաստատ բարենորոգումն Հայաստանը կարող էր սպասել միայն կառավարական ձևի փոխվելուց։ Բ. Դուռը կօմիսարներ նշանակեց, բայց նրանց ներկայացրած զեկուցմունները ոչ որին յայտնի չեն։ Ցայտնի չէ, նոյնպէս, արդեօք Բ. Դուռը հետաքնդ մասնաժողովների խորհրդներին։ Այդ պատճառով անգլիական կառավարութիւնը հրաւիրում է ևրօպական պետութիւնների, ազատելու իրան Բերլինի դաշնագրի մի քանի չը կատարված կէտերի իրագործելու մէջ։ Մարկիզ Սալիսբիւրի ասեց որ տէրութեան ջանքերը համակրութեամբ են ընդունվում ամենքից, որովհետև ամենքը ցանկանում են Թիւրքիայի թշուառ ազգութիւնների գրութեան բարելաւումն, բայց կասկած յայտնեց այդ ջանքերի ազնիվ հետևանքի մասին։ Լորդ Գրանվիլ պատասխանեց, թէ նախկին մինիս-